



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 10

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2015 թվականի հոկտեմբերի 26-ից

● Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒ Ն

ԳՅՈՒՏԵՐ	4, 60
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 62</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	9, 64
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>11, 66</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	12
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>14</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>44</i>
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ.....	48
ՑՈՒՑԻՉՆԵՐ	51
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	53
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	67

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 60
Сведения о выданных патентах.....	6, 62
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	9, 64
Сведения о выданных патентах.....	11, 66
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	12
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	14
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	44
ГЕОГРАФИЧЕСКИЕ УКАЗАНИЯ, НАИМЕНОВАНИЯ МЕСТ ПРОИСХОЖДЕНИЯ, ГАРАНТИРОВАННЫЕ ТРАДИЦИОННЫЕ ПРОДУКТЫ	48
УКАЗАТЕЛИ.....	51
СООБЩЕНИЯ.....	53
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	67

CONTENTS

INVENTIONS.....	4, 60
Information on granted patents.....	6, 62
UTILITY MODELS.....	9, 64
Information on granted patents.....	11, 66
TRADE MARKS.....	12
Information on registered trade marks and service marks	14
Information on renewal of effect of trademark registration	44
GEOGRAPHICAL INDICATIONS, APPELLATIONS OF ORIGIN, GUARANTEED TRADITIONAL PRODUCTS.....	48
INDEXES.....	51
REPORTS.....	53
TWO-LETTER CODES.....	67

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2015.01 (11) 2960 (13) A

B25J 17/00

F21S 2/00

(21) AM20140055 (22) 17.04.2014

(72) Կարեն Լյուդվիգի Պետրոսյան (AM)

(73) Կարեն Լյուդվիգի Պետրոսյան, 0068, Երևան, Ռաֆֆու 35, բն.56 (AM)

(54) Մոդուլային լուսավորման սարք և դարձման մեխանիզմ

(57) Գյուտը վերաբերում է լուսատեխնիկային: Մոդուլային լուսավորման սարքն ունի բազմաթիվ լուսատու մոդուլներ, որոնցից յուրաքանչյուրն ունի լուսադիրոջային լույսի լուսարձակման հանգույց և դարձման մեխանիզմ: Դարձման մեխանիզմն ունի փոխուղղահայաց հատվող առանցքների շուրջը դարձվող երկու մուտքի օղակներ, որոնցից յուրաքանչյուրը միացված է անշարժ օղակին՝ իրանին, իր երկու ծայրակետերում գտնվող համառանցք սոնինների միջոցով և նշված ծայրակետերի միջև ունի երկայնական ուղղորդիչ տարր, իսկ դրանցից առնվազն մեկն ունի շրջանագծային ուղղորդիչ տարր: Մեխանիզմի ելքի օղակը անմիջական հպման միջոցով կապված է մուտքի օղակներից յուրաքանչյուրին՝ դրանց դարձման առանցքների հատման կետի շուրջը դարձման հնարավորությամբ: Իսկ լուսարձակման հանգույցն անշարժ ամրակցված է մեխանիզմի ելքի օղակին՝ մուտքի օղակի շարժաբերման միջոցով լույսի ճառագայթման ուղղությունը տարածության մեջ կարգավորելու հնարավորությամբ: Մուտքի օղակներից յուրաքանչյուրի սոնիններն ունեն ելուստներ իրանի հակադիր կողմերում, իսկ մոդուլներն ունեն իրենց մուտքի օղակների դարձման առանցքներով համառանցք դասավորվածություն և մուտքի օղակների պտտական շարժումը փոխանցելու հնարավորությամբ կապված են իրար այդ օղակների ելուստներով: Մոդուլները կապված են իրար եզրային մոդուլների միմյանց զուգահեռ դարձման առանցքներ ունեցող մուտքի օղակների ազատ սոնիններով բազմաթիվ շարժաբեր հանգույցների միջոցով: Հանգույցն ունի հետադարձ-առաջընթաց շարժվելու և

անշարժ սևեռվելու հնարավորություն ունեցող շարժաբեր սողնակ, և այդ սողնակին մեկ ծայրով միացված երկու ճոճալծակներ, որոնք ունեն մեկ կետի շուրջը ճոճվելու և միմյանց հետ համառանցք սևեռվելու հնարավորություն: Յուրաքանչյուր հանգույց մեխանիզմի միջոցով կապված է եզրային մոդուլներից մեկին՝ սողնակի առաջընթաց շարժումը մոդուլի մուտքի օղակի պտտական շարժմանը փոխարկելու հնարավորությամբ, իսկ հարակից հանգույցները ճոճալծակների ազատ ծայրերով կապված են իրար առաջընթաց կինեմատիկական զույգի միջոցով: Լուսատու մոդուլներն ու շարժաբեր հանգույցներն ամրակցված են իրար կցման միջոցով:

Ընդլայնվում է սարքի լույսի գումարային հոսքի ցուցանիշների համակցված կարգաբերման հնարավորությունը, 14 նկ.:

(51) 2015.01 (11) 2961 (13) A

C12G 3/00

(21) AM20150092 (22) 17.07.2015

(72) Գեորգի Օհանյան (AM)

(73) Գեորգի Օհանյան (AM)

(54) Մրգային թունդ ավրոհոլային խմիչքի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սննդարդյունաբերությանը, այն է՝ թունդ ավրոհոլային խմիչքների պատրաստման եղանակներին:

Մրգային թունդ ավրոհոլային խմիչքի պատրաստման եղանակ, ըստ որի որպես միրգ օգտագործում են վայրի տանձը, մրգային քաղցուն ենթարկում են կրկնակի թորման, ստացված մրգային սպիրտի մի մասը հնացնում են կաղնե տակառում, մի մասը՝ ծիրանենու տակառում և մի մասը տանձենու տակառում, ընդ որում, բոլոր երեք տակառներում հնացնում են 3-6 ամիս՝ որից հետո կատարում կաղնե, ծիրանենու և տանձենու փայտից տակառներում հնացված սպիրտների կուպաժ՝ 3:1:1 հարաբերակցությամբ, որից հետո

ավելացնում են 0,5% -ից ոչ ավելի խնճորի սպիրտ և շարունակում են այդ սպիրտների խառնուրդի հնացումը կաղնե տակառում, ընդ որում, հնացման ընդհանուր ժամկետը կազմում է առնվազն մեկ տարի: Վերջում ավելացնում են փափկացված ջուր խմիչքի համապատասխան թնդությունը ստանալու համար:

Ընդլայնվում է բրենդի տեսակի մրգային թունդ ավլոհոլային խմիչքների տեսականին:

(74) Արեգ Պետրոսյան

**(51) 2015.01 (11) 2962 (13) A
G01N 33/00**

(21) AM20150068 (22) 01.06.2015

(72) Սուրեն Սարգսյան (AM)

(73) Սուրեն Սարգսյան (AM)

(54) Ըստ օրգանական նյութերի և կոշտության աղերի խտության ջուրը չափամասերի բաժանման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է վերլուծական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ըստ օրգանական նյութերի և կոշտության աղերի խտության ջրի չափամասերի բաժանմանը, և կարող է կիրառվել, օրինակ, խմելու ջրի մաքրման և փափկացման համար, ինչպես նաև ջրի միկրոտարրային կազմի ուսումնասիրության համար:

Ըստ օրգանական նյութերի և կոշտության աղերի խտության ջուրը չափամասերի բաժանման եղանակ, ըստ որի ջուրը սառեցնում են երկարավուն անոթում՝ անոթի հորիզոնական դիրքում, հետո հալեցնում են անոթի ուղղաձիգ դիրքում, որից հետո բաժանում են չափամասերի, ընդ որում, անոթում գտնվող ջրի ծավալը չի գերազանցում անոթի ծավալի 1/4-ը, հավված ջուրը հալման ընթացքում աստիճանաբար բաժանում են հինգ հավասար չափամասերի:

Ապահովվում է ջրի չափամասերի բաժանման եղանակի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնումը:

(74) Արեգ Պետրոսյան

**(51) 2015.01 (11) 2963 (13) A
G02F 1/00**

(21) AM20140050 (22) 11.04.2014

(72) Հակոբ Մարգարյան (AM), Նելսոն Թաբիրյան (US), Ուպենդրա Ռոհաջի (US), Վլադիմիր Հարությունյան (AM), Նունե Հակոբյան (AM), Վալերի Աբրահամյան (AM), Դավիթ Հովհաննիսյան (AM), Տիգրան Սարգսյան (AM), Արտաշես Մովսիսյան (AM), Պետրոս Գասպարյան (AM)

(73) Հակոբ Մարգարյան, 0046, Երևան, Թադևոսյան 10, բն.59 (AM), Նելսոն Թաբիրյան, 760 Վիլյամս, Ուինթեր Փարք, Ֆլորիդա, 32789 (US), Դավիթ Հովհաննիսյան, 0026, Երևան, Գարեգին. Նժդեհի 19, բն. 45 (AM), Նունե Հակոբյան, 0033, Երևան, Բաղրամյան 75, բն. 11 (AM)

(54) Մարդու օրգանիզմում գլյուկոզայի պարունակության ոչ ինվազիվ որոշման սարք

(57) Գյուտը վերաբերում է բժշկական սարքաշինության ոլորտին, մասնավորապես՝ մարդու օրգանիզմում գլյուկոզայի պարունակությունը որոշող օպտիկական սարքի մշակմանը:

Առաջարկվող սարքում օգտագործվում են միայն օպտիկական տարրեր: Սարքը գրանցում է աչքից անդրադարձած և աչքի երկբեկմամբ պայմանավորված մոնոքրոմատիկ լուսային ճառագայթի բևեռացման վեկտորի փոփոխումը, ինչը պայմանավորված է աչքի հեղուկում գլյուկոզայի պարունակությամբ: Առաջարկվող սարքում օգտագործվում են նոր սերնդի օպտիկական տարրեր՝ հեղուկ բյուրեղային բևեռացնող դիֆրակցիոն ցանց և առանցքային համաչափությամբ հեղուկ բյուրեղային փուլային հապաղիչ, ինչը բերում է մոնոքրոմատիկ ճառագայթի բևեռացման վեկտորի պտտման անկյան որոշման պարզեցմանը և ճշգրտության բարձրացմանը: Բացի այդ, նման սարքերում սովորաբար օգտագործվող գծայնորեն բևեռացված ճառագայթի փոխարեն օգտագործվում է կիսահաղորչային լազերային ճառագայթ կամայական բևեռացվածությամբ, 1 նկ.:

(51) 2015.01 (11) 2964 (13) A
G11C11/00

(21) AM20150046 (22) 07.04.2015

(72) Օլեգ Պետրոսյան (AM), Նարեկ Ավդալյան (AM), Կամո Պետրոսյան (AM)

(73) Օլեգ Պետրոսյան, 0033, Երևան, Հ. Էմինի 5, բն. 52 (AM), Նարեկ Ավդալյան, 2415, Կոտայքի մարզ, գյուղ Քասախ, Ռ. Սաֆարյան 1, բն.13 (AM), Կամո Պետրոսյան, 0033, Երևան, Հ. Էմինի 5, բն. 52 (AM)

(54) Ստատիկ հիշող սարքերի 8T հիշողության բջիջ

(57) Գյուտը վերաբերում է միկրոէլեկտրոնիկայի բնագավառին և կարող է կիրառվել մեծ ինֆորմացիոն ունակությամբ ստատիկ հիշող սարքերում:

Ստատիկ հիշող սարքերի 8T հիշողության բջիջն ունի առաջին և երկրորդ p-տիպի մետաղ-օքսիդ-կիսահաղորդչային ու առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ n-տիպի մետաղ-օքսիդ-կիսահաղորդչային տրանզիստորներ, առաջին և չորրորդ n-տիպի տրանզիստորների ակունքները համապատասխանաբար միացված են հիշողության բջջի WBLB և WBL բիթի գծերին: Փականները միավորված և միացված են ընթերցման ժամանակ տողի ընտրման WWL գծին, առաջին n-տիպի տրանզիստորի արտաբերը միացված է առաջին p-տիպի

և երկրորդ n-տիպի տրանզիստորների արտաբերներին ու երկրորդ p-տիպի և երրորդ ու հինգերորդ n-տիպի տրանզիստորների փականներին, չորրորդ n-տիպի տրանզիստորի արտաբերը միացված է երկրորդ p-տիպի և երրորդ n-տիպի տրանզիստորների արտաբերներին ու առաջին p-տիպի և երկրորդ n-տիպի տրանզիստորների փականներին ու հինգերորդ n-տիպի տրանզիստորի արտաբերին, առաջին և երկրորդ p-տիպի տրանզիստորների ակունքները միավորված և միացված են բարձր պոտենցիալ ունեցող սնման աղբյուրին, երկրորդ, երրորդ և հինգերորդ n-տիպի տրանզիստորների ակունքները միավորված և միացված են ցածր պոտենցիալ ունեցող սնման աղբյուրին, վեցերորդ n-տիպի տրանզիստորի ակունքը միացված է հինգերորդ n-տիպի տրանզիստորի արտաբերին, n-տիպի տրանզիստորի փականը միացված է ընթերցման ժամանակ տողի ընտրման RWL գծին, իսկ արտաբերը միացված է ընթերցման ժամանակ օգտագործվող RBL բիթի գծին: Գյուտի համաձայն՝ հինգերորդ n-տիպի տրանզիստորի արտաբերը, երկրորդ p-տիպի և երրորդ n-տիպի տրանզիստորների արտաբերներն ու առաջին p-տիպի և երկրորդ n-տիպի տրանզիստորների փականները միավորված են լրացուցիչ կապի գծով:

Մեծացվում է ընթերցման ժամանակ բիթի գծի վրա լարման արժեքը, 4 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2015.01 (11) 425 (13) Ս
A61 C19/00

(21) AM20150083U (22) 07.07.2015

(72) Լյուդմիլա Վալերիի Տատինցյան (AM),
Հրանտ Յուրիի Տեր-Պողոսյան (AM)

(73) Լյուդմիլա Վալերիի Տատինցյան, 0005,
Երևան, Տիգրան Մեծի 40, բն. 39 (AM)

(54) Քունքստործնտային հողում աղմուկների գրանցման սարք

(57) Գյուտը վերաբերում է բժշկական էլեկտրոնիկային, մասնավորապես՝ քունքստործնտային հողի դիսֆունկցիայի հետազոտմանը, պաթոլոգիայի ախտորոշմանը, գրանցմանը և կարող է օգտագործվել թերապիայում, օրթոպեդիայում, օրթոդոնտիայում, իմպլանտոլոգիայում, ինչպես նաև ներյումկանային ստոմատոլոգիայում ընդարձակ բուժման դեպքերում, ատամնաշարի ուղղման և պրոթեզավորման ժամանակ:

Սարքն ունի հաջորդաբար իրար միացած մեխանիկական տատանումների տվիչ, էլեկտրական ազդանշանների ուժեղարար և ազդանշանների մշակման և գրանցման ծրագրով օժտված համակարգիչ, ընդ որում, տվիչը և տվիչի սնուցման ինքնավար աղբյուրը տեղակայված են գսպանակային աղեղ ունեցող ականջակալի իրանի մեջ: Էլեկտրական ազդանշանների ուժեղարարը տեղակայված է ականջակալի իրանի մեջ և միացած է տվիչի սնուցման ինքնավար աղբյուրին:

Նվազեցվում է օգտակար ազդանշանների աղավաղումը, հարմարեցվում է սարքի օգտագործումը, 2 նկ.:

(51) 2015.01 (11) 426 (13) Ս
C02F3/00
C02F11/00

(21) AM20150069U (22) 02.06.2015

(72) Վալտեր Աթանեսյան (AM), Աշոտ Սաֆարյան (AM)

(73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ջրավազանի մաքրման սարք

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել խոշոր ջրավազանների և արհեստական լճերի աղտոտվածության մաքրման համար:

Ջրավազանի մաքրման սարքն ունի իրան, իրանի մեջ տեղակայված պահոց, միջանկյալ անցքավոր հատակ, դրա վրա լցված ջրի մաքրման ծակոտկեն նյութեր, ջրի մուտքի և մաքրված ջրի հեռացման անցքեր, ծակոտկեն նյութերի մաքրման ջրի ելքի անցք և իրանի հատակում տեղակայված ողնակ: Ջրի մուտքի անցքը կատարված է պահոցից վերև, որից ներքև պահոցի վերին մասում տեղակայված են շրջանակների վրա տեղակայված երկու ցանց: Ցանցերը մի կողմով կոշտ ամրակցված են զուգահեռագծային քառոտակ մեխանիզմի հետ կապի մեջ գտնվող սոնիներին, սոնիները կոշտ միակցված են քառոտակ մեխանիզմի շուտովիկների հետ, իսկ շուտովիկների մյուս ծայրերը շարժաձողի միջոցով միակցված են հիդրոշարժաբերի մխոցին: Հիդրոշարժաբերը քառոտակ մեխանիզմի հետ միասին տեղակայված է իրանի կողային պատում կատարված խցի մեջ: Ծակոտկեն նյութերի մաքրման ջրի ելքի անցքը կատարված է պահոցի պատին՝ ծակոտկեն նյութերի վերին մակերևույթից վերև:

Բարձրացվում է ջրի նախնական և վերջնական մաքրման որակը և ծավալը, 2 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

**Տեղեկություններ գրանցված ապրանքային
և սպասարկման նշանների մասին**

(210) 20141336 (111) 23501
(220) 27.08.2014 (151) 01.10.2015
(181) 27.08.2024

(730) Աստելլաս Դոչլենդ ԳմբՀ, DE
(442) 07.11.2014
(540)

LEVACT

(511) դաս 5. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ արտադրանք բժշկական (բուժական) նպատակների համար:
(740) Արարատ Գալոյան

(210) 20141337 (111) 23502
(220) 27.08.2014 (151) 01.10.2015
(181) 27.08.2024

(730) Աստելլաս Դոչլենդ ԳմբՀ, DE
(442) 07.11.2014
(540)

ЛЕВАКТ

(511) դաս 5. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ արտադրանք բժշկական (բուժական) նպատակների համար:
(740) Արարատ Գալոյան

(210) 20141343 (111) 23503
(220) 28.08.2014 (151) 01.10.2015
(181) 28.08.2024

(730) Աստելլաս Դոչլենդ ԳմբՀ, DE
(442) 07.11.2014
(310) TN/E/2014/00389 (320) 11.04.2014 (330) TN
(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, կապույտ, մուգ կապույտ, կարմիր և մուգ կարմիր գունային համակցությամբ:
(511)

դաս 5. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ արտադրանք բժշկական (բուժական) նպատակների համար:

(740) Արարատ Գալոյան

(210) 20141488 (111) 23504
(220) 09.10.2014 (151) 01.10.2015
(181) 09.10.2024

(730) «ՌԻՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ, Երևան, Շոլոյան 5, AM
(442) 17.10.2014
(540)

ԱՐՄԵՆԻԱՆ ՌՈՅԱԼ
ARMENIAN ROYAL
ARMENIAN ROYAL

(511) դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.

դաս 34. ծխախոտ. ծխելու պիտույքներ.
լուցկի:

(210) 20141657 (111) 23505
(220) 14.11.2014 (151) 01.10.2015
(181) 14.11.2024

(730) «Թոփ մոդել Հայաստան փրոդաքշն» ազգային ասոցիացիա, Երևան, Արցախի 8/4, բն.37, AM
(442) 03.12.2014

(540)



(526) «top model» արտահայտությունը և «Armenia», «production» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր, կանաչ, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 41. նորաձևության, գեղեցկության ազգային մրցույթի կազմակերպում, անցկացում. կրթություն, ուսուցում, ուսումնական գործընթացի ապահովում. մշակութային միջոցառումների կազմակերպում:

(210) 20141824 (111) 23506
 (220) 08.12.2014 (151) 01.10.2015
 (181) 08.12.2024

(730) Դը Էսթեյթ օֆ Մերիլին Մոնրո, ՍՊԸ, ՍՏ
 (442) 16.01.2015
 (540)

MARILYN MONROE

(511)

դաս 44. բժշկական ծառայություններ. անասնաբուժական ծառայություններ. կենդանիների և մարդկանց հիգիենիկ և կոսմետիկական ծառայություններ. գյուղատնտեսական, այգեգործական և անտառային ծառայություններ:

(740) Սարգիս Կնյազյան

(210) 20141925 (111) 23507
 (220) 27.12.2014 (151) 01.10.2015
 (181) 27.12.2024

(730) «Սթար Ջիմ» ՍՊԸ, Երևան, Արամի 70, թիվ 1 նկուղի տարածք, AM

(442) 18.02.2015

(540)



(526) «gym» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝ առողջության բարելավման և մարմնամարզության հետ կապված ծառայություններ, խորհրդատվություն ֆիզիկական վարժությունների վերաբերյալ. մարմնամարզության համար անհրաժեշտ տարածքների և պարագանների վարձակալության ծառայություն.

դաս 44. բժշկական ծառայություններ. ՍՊԱ ծառայություններ, դեմքի, մազերի, մաշկի և մարմնի բուժում, մատնահարդարման և ոտնահարդարման ծառայություններ, մերսման ծառայություններ, գեղեցկության սրահի ծառայություններ:

(740) Ալբինա Նազարյան

(210) 20141934 (111) 23508
 (220) 29.12.2014 (151) 01.10.2015
 (181) 29.12.2024

(730) Էբբոթթ Լաբորըթրիզ, US
 (442) 20.04.2015
 (540)



(511)

դաս 1. ստուգիչ լուծույթներ և ստուգաճշտման հեղուկներ բժշկական ախտորոշման սարքերի և սարքավորումների համար. լաբորատոր պայմաններում բժշկական ախտորոշման և (կամ) վերլուծության համար օգտագործվող բժշկական ախտորոշիչ սարքերի վերահսկիչ լուծույթներ և ստուգաճշտման հեղուկներ. քիմիական ազդանյութեր բժշկական ախտորոշման և (կամ) վերլուծության համար. ազդանյութեր լաբորատոր կիրառման համար. ԴՆԹ-փրայմերներ. ԴՆԹ-նմուշներ. կենսաբանական նմուշներից նուկլեինաթթուների լուծահանման համար օգտագործվող նյութեր. պոլիմերազա և բուֆերային նյութեր՝ կենսատեխնոլոգիական ոլորտում օգտագործման համար. քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են նուկլեինաթթուների հաջորդականությունների, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակների և (կամ) ախտածին մանրէների հարուցիչների վերլուծության և նույնականացման ժամանակ. միացություններ և ազդանյութեր, որոնք օգտագործվում են նուկլեինաթթուների հաջորդականությունների, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակների և (կամ) ախտածին մանրէների հարուցիչների վերլուծության և նույնականացման ժամանակ. ազդանյութեր և նմուշներ պարունակող աշխտորոշման հավաքածուներ նուկլեինաթթուների հաջորդականությունների, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակների և (կամ) ախտածին մանրէների հարուցիչների

վերլուծության և նույնականացման համար. ախտորոշման պատրաստուկներ նուկլեինաթթուների հաջորդականությունների, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակների և (կամ) ախտածին մանրէների հարուցիչների վերլուծության և նույնականացման համար. ԴՆԹ-ի լուծահանման ստուգիչ խմբեր. ԴՆԹ-ի լուծահանման ստուգիչ խմբեր. բացասական երևույթների ստուգման միջոցներ. ստուգաճշտման լուծույթներ. նմուշների պատրաստման հավաքածուներ լաբորատոր հետազոտությունների համար.

դաս 5. դեղագործական պատրաստուկներ. բժշկական ազդանյութեր շաքարախտի վերահսկման համար. բժշկական ցուցչային շերտեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի հսկման համար. բժշկական ցուցչային շերտեր արյան մեջ կետոնների մակարդակի հսկման համար. ախտորոշիչ ազդանյութեր. բժշկական ախտորոշիչ ազդանյութեր. ախտորոշիչ պատրաստուկներ բժշկական նպատակների համար. ախտորոշիչ տեստ-հավաքածուներ. աղային լուծույթներ, այդ թվում՝ աչքի վիրաբուժության մեջ որպես ոռոգիչ լուծույթներ օգտագործվող մանրէազերծ աղային լուծույթներ. ակնաբուժական պատրաստուկներ և բաղադրություններ, այդ թվում՝ յուղոլ և խոնավացնող լուծույթներ. պատրաստուկներ հպառասանների խնամքի համար, այդ թվում՝ լուծույթներ հպառասանների ախտահանման, մաքրման, խոնավացման, թրջման, չեզոքացման, փափկացման, պահման, պահպանման և ողողման համար, այդ թվում՝ լուծույթների կամ հաբերի տեսքով. աչքի յուղային կաթիլներ հպառասանների համար. ակնաբուժական միջոցներ և պատրաստուկներ աչքերի խնամքի համար, այդ թվում՝ աչքի կաթիլներ. նատրիումի քլորիտ, որն օգտագործվում է աչքի պատրաստուկների մեջ որպես հակամանրէական հատկություններ ունեցող կոնսերվանտ. դեղերով տոգորված անձեռոցիկներ. ախտահանող, մանրէազերծող անձեռոցիկներ. անձեռոցիկներ կոպերի համար. անձեռոցիկներ դեմքի համար. մանրէազերծող լուծույթներ. աչքերի խնամքի և աչքերի լվացման համար լուծույթներ, միջոցներ և պատրաստուկներ. աչքի հեղուկի փոխարինիչներ. դեղամիջոցներով կաթիլներ.

հիալուրոնային թթվի լուծույթներ ներակնային օգտագործման համար. ազդանյութեր բժշկական նպատակների համար, այդ թվում՝ արյան դյուրատար վերլուծիչներում օգտագործելու համար. սննդային հավելումներ. բժշկական նպատակներով օգտագործման համար նախատեսված դիետիկ սննդային նյութեր. սննդային հավելումներ բերանով կամ հարկադրված սնման համար. որպես սննդի փոխարինիչներ օգտագործման համար սննդային հավելումներ. հեղուկի կամ փոշու տեսքով սննդարար հավելումներ մարդկանց օգտագործման համար. որպես սննդի փոխարինիչներ օգտագործվող սննդային հավելումներով հարստացած ըմպելիքներ և փոշիներ. որպես սննդի փոխարինիչներ օգտագործվող սննդային էներգետիկ բոքոնիկներ և բոքոնիկների տեսքով հավելումներ. մանկաբուժության մեջ օգտագործվող սննդային պատրաստուկներ. սննդային հավելումներ երեխաների համար. խառնուրդներ նորածինների համար. մանկական սնունդ. նախածննդյան վիտամիններ. վիտամիններ կաթնաթորման համար. լուծույթներ էլեկտրոլիտի փոխարինման համար. դիետիկ հավելումներ մարդկանց համար. ռեպլենտներ. միացություններ և ազդանյութեր նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների բժշկական վերլուծության և նույնականացման համար. ազդանյութեր և նմուշներ պարունակող բժշկական ախտորոշման հավաքածուներ նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների վերլուծության և նույնականացման համար. բժշկական ախտորոշման պատրաստուկներ նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների վերլուծության և նույնականացման համար. բժշկական լրակազմեր նմուշների պատրաստման համար.

դաս 9. համակարգչային ծրագրային արտադրանք, այդ թվում՝ աշխատածրագրեր շաքարախտի կառավարման համար. արյան սքրինինգի (զանգվածային հետազոտման) սարքեր. լաբորատոր վերլուծիչներ արյան, օրգանիզմի հեղուկի և (կամ) հյուսվածքների չափման, հետազոտման և վերլուծության համար. հեմատոլոգիական վերլուծիչներ. կլինիկական կենսաքիմիայի վերլուծիչներ. վերլուծիչներ իմունալոգիական վերլուծության համար. կլինիկական մոլեկուլային լաբորատոր ավտոմատացված սարքեր և սարքավորումներ. նմուշների լաբորատոր ընտրման սարքեր և գործիքներ. սեկվենսերներ, սպեկտրաչափներ, սենսորներ և համակարգիչներ ներառող մոլեկուլային ախտորոշման համակարգեր նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների վերլուծության համար. լաբորատոր սարքեր և սարքավորումներ միկրոկենսաբանական սքրինինգի (զանգվածային հետազոտման) և մանրէների որոշման համար. նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների որոշման և վերլուծության համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք ախտածին մանրէների որոշման, դեղամիջոցների նկատմամբ դիմադրության բնորոշման և դատաբժշկական տվյալների համար. լաբորատոր սարքեր և գործիքներ, այն է՝ մոլեկուլային ախտորոշման տվիչներ նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների վերլուծության համար. մոլեկուլային ախտորոշման սարքերի համակարգչային ծրագրային արտադրանք տվյալների նախնական մշակման, սարքերի վերահսկման, տվյալների վերլուծության և հաշվետվության համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք, այդ թվում՝ նաև լաբորատոր և գիտական սարքերի և սարքավորումների համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական ախտորոշման ոլորտում օգտագործման համար, այդ թվում՝ նաև բժշկական ախտորոշման սարքերի և

սարքավորումների համար. էլեկտրոնային հրատարակություններ, այդ թվում՝ ուղեցույցներ և ձեռնարկներ ախտորոշման լաբորատոր սարքերի ու սարքավորումների, լաբորատոր ավտոմատացված համակարգերի և դրանց վերաբերող ծրագրային արտադրանքի համար. տվյալների կառավարման ծրագրային արտադրանք ախտորոշման բժշկական սարքերի համար. տվյալների կառավարման ծրագրային արտադրանք հեմատոլոգիական վերլուծիչների, կլինիկական կենսաքիմիայի վերլուծիչների, իմունալոգիական վերլուծիչների և արյան սքրինինգի (զանգվածային հետազոտման) սարքերի և սարքավորումների համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք ախտորոշման բժշկական սարքերի համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք հեմատոլոգիական վերլուծիչների, կլինիկական կենսաքիմիայի վերլուծիչների, իմունալոգիական վերլուծիչների և արյան սքրինինգի (զանգվածային հետազոտման) սարքերի և սարքավորումների համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական ախտորոշման լաբորատորիաների աշխատանքային գործընթացի կառավարման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք լաբորատոր տվյալների կառավարման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական և (կամ) լաբորատոր ախտորոշման սարքերի ու սարքավորումների աջակցության և (կամ) հսկման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական և (կամ) լաբորատոր ախտորոշման սարքերի ու սարքավորումների անսարքությունների վերացման համար. համակարգչային ծրագրային արտադրանք բժշկական ախտորոշման թեստավորման տվյալների մշակման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական ախտորոշման թեստավորման ընթացքում օգտագործման համար. ծրագրային և ապարատային արտադրանք

լաբորատոր ախտորոշման սարքերի ու սարքավորումների հեռահսկման համար. կապակցանյութով նախապես լիցքավորված լաբորատոր սյունակներ՝ ԴՆԹ և ՌՆԹ նմուշների առանձնացման և մաքրման համար. համակարգչային ծրագրային արտադրանք աչքերի վիրահատության ընթացքում օգտագործման համար. ծրագրային արտադրանք «Ֆակիկ» ներակնային ոսպնյակների (փոխապատվաստվող հատուկ տեսակի ներակնային ոսպնյակներ, որոնք տեղադրվում են աչքի մեջ կարճատևության բուժման համար՝ առանց աչքի բնական ոսպնյակը հեռացնելու) բեկումային ունակության հաշվարկման համար. համակարգչային ծրագրային արտադրանք աչքի վիրահատության ժամանակ օգտագործվող բժշկական սարքերի և ակնավիրաբուժական սարքերի վերահսկման համար. ակնոցներ տեսողության շտկման և (կամ) բարելավման համար, ինչպես նաև հպառոսպնյակներ. մագնիսական ծածկագրությամբ տվյալների բանական քարտեր ակնային լազերային վիրահատության համակարգերի հետ օգտագործման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք արյան վերլուծության սարքերի ու սարքավորումների աջակցության համար. տվյալների կառավարման ծրագրային արտադրանք արյան վերլուծության ոլորտում օգտագործման համար. տվյալների կառավարման ծրագրային և ապարատային արտադրանք բժշկական ախտորոշման սարքերի ու սարքավորումների համար. տվյալների կառավարման ծրագրային և ապարատային արտադրանք՝ արյան վերլուծիչների համար նախատեսված ծրագրային արտադրանքի և ապարատային արտադրանքի միջև տվյալների փոխանակման համար. համակարգչային ծրագրային և ապարատային արտադրանք արյան վերլուծության սարքերի ու սարքավորումների և (կամ) բժշկական ախտորոշման սարքերի ու սարքավորումների հեռահսկման համար. տվյալների մշակման սարքեր և սարքավորումներ. էլեկտրոնային սարքերի կիրառական ծրագրեր. գիտական սարքեր ու սարքավորումներ և դրանց մասեր ու կցամասեր. լաբորատոր սարքեր ու սարքավորումներ և դրանց մասեր ու

կցամասեր. սեկվենսերներ. սպեկտրա-
չափներ. սենսորներ. կենսասենսորներ.
ջերմացիկլերներ. անալիարարներ, բացա-
ռությամբ բժշկական ախտորոշման
համար նախատեսվածների. նմուշների
պատրաստման սարքեր և սարքավորումներ.
հավաքման սարքերից ու լաբորատոր
սարքավորումներից բաղկացած փորձարկման
և հավաքման հավաքածուներ. լաբորատոր
կոնտեյներներ. կենսանույնականացման
սարքեր և սարքավորումներ, որոնք թույլ
են տալիս իրականացնել նուկլեինա-
թթուների հաջորդականության, նուկլեինա-
թթուների, գենետիկական նյութերի,
վարակահարուցիչների և (կամ) ախտածին
մանրէների վերլուծության համար ցուցանիշ-
ների նույնականացումը, գենատիպացումը և
որոշումը. փորձանոթներ կենտրոնախուսման
միջոցով ԴՆԹ-ի ստացման համար.
փորձանոթներ կենտրոնախուսման միջո-
ցով ՌՆԹ-ի ստացման համար. ԴՆԹ-ի
պատրաստման փորձանոթներ. ՌՆԹ-ի
պատրաստման փորձանոթներ. փորձանոթներ
վացահանման միջոցով ԴՆԹ-ի ստացման
համար. փորձանոթներ վացահանման միջոցով
ՌՆԹ-ի ստացման համար. ֆերմենտների
խառնման սրվակներ. ֆերմենտների խառնման
փորձանոթներ. ծրագրային արտադրանք՝
հիմնականում նախատեսված տվյալների
փոխկապակցման համար՝ հատկապես
գիտահետազոտական և ախտորոշման
լաբորատորիաներում օգտագործման համար.
աշխատանքների հեռահսկման միջոց-
ներ վիրաբուժական կամ բժշկական սար-
քերի, սարքավորումների և գործիքների
կառավարման և հսկման համար. բոլոր վերո-
հիշյալ ապրանքների մասեր և կցամասեր. բոլոր
ապրանքները ընդգրկված 9-րդ դասում.

դաս 10. բժշկական սարքեր. բժշկական
սարքեր և գործիքներ շաքարախտի
ստուգման և հսկման համար. արյան գլյուկոզի
գրանցասարքեր. արյան մեջ գլյուկոզի
պարունակության տվիչներ. արյան կետոնների
գրանցասարքեր. արյան կետոնների տվիչներ.
շաքարախտի ստուգման և հսկման նպատակով
արյուն վերցնելու և ընտրելու սարքեր. արյան
ստուգման, ընտրման և հետազոտման սարքեր,
սարքավորումներ և գործիքներ. լաբորատոր

վերլուծիչներ արյան, օրգանիզմի հեղուկների և
(կամ) հյուսվածքների չափման, հետազոտման
և վերլուծության համար. բժշկական ախտորոշ-
ման սարքեր, սարքավորումներ և գործիքներ
լաբորատոր պայմաններում ախտորոշիչ
ստուգման և (կամ) վերլուծության համար.
հեմատոլոգիական վերլուծիչներ. կլինիկական
կենսաքիմիայի վերլուծիչներ. իմունաքիմիայի
վերլուծիչներ. լաբորատոր սարքեր,
սարքավորումներ և գործիքներ լաբորատոր
պայմաններում ախտորոշիչ ստուգման և
(կամ) վերլուծության համար. լաբորատոր
սարքավորումներ բժշկական ախտորոշման
ոլորտում օգտագործման համար. տվյալների
կառավարման և լաբորատոր ավտոմատացված
համակարգեր բժշկական ախտորոշման
ոլորտում օգտագործման համար. սարքեր,
սարքավորումներ և գործիքներ մոլեկուլային
ախտորոշման համար. լաբորատոր սարքեր,
սարքավորումներ և գործիքներ մանրէների
ստուգման, ընտրման, հետազոտման և
նույնականացման համար. լաբորատոր սարքեր,
այն է՝ մոլեկուլային ախտորոշման չափիչ սար-
քեր նուկլեինաթթուների հաջորդականու-
թյան, նուկլեինաթթուների, գենետիկական
նյութերի, վարակահարուցիչների և (կամ)
ախտածին մանրէների վերլուծության
համար. բժշկական սարքեր ակնաբուժության
ոլորտում օգտագործման համար, այն
է՝ լազերային համակարգեր, որոնք
ներառում են լուսապատճենման, պատկերի
ձևավորման սարքեր, ուղղորդիչ սարքեր
ու լազերներ և դրանց կառուցվածքային
մասեր. ակնաբուժության վիրաբուժության
սարքեր կատարակտային վիրահատության
և վիրոնէկտոմիայի (վիրահատություն, որի
միջոցով աչքից հեռացնում են ապակենման
մարմիններ) մեջ կիրառման նպատակով.
վիրաբուժական և բժշկական ակնաբուժական
սարքերի, սարքավորումների և գործիքների
կրման, տեղադրման և պահման համար հատուկ
հարմարեցված պատյաններ. ներկառուցված
ծրագրային արտադրանքով վիրաբուժական
գլխադիրներ ֆակտեմուսիֆիկացիայի (կատա-
րակտի հեռացման միկրովիրաբուժական
մեթոդ) և վիրոնէկտոմիայի մեջ կիրառման
համար. դանակներ, կտրող գործիքներ,
ասեղներ, գլխադիրներ, ասպիրացիայի
և ողողման փողակներ և ծայրոցներ.

օդաճնշական հավաքածուներ, ձեռքի գլխադիրներ, աչքերի բժշկական միջադիրներ, էկրաններ, սկուտեղ-տակնոցներ և փաթեթներ, կապոցներ դրենաժի համար. ակնաբուժական իմպլանտներ ներակնային հիպերտենզիայի և գլաուկոմայի կանխարգելման և բուժման համար. պարկուճային ձգովի օղակներ. աչքերի իմպլանտներ. ներակնային ոսպնյակներ. վիրաբուժական ձեռքի սարքեր, սարքավորումներ և գործիքներ. բժշկական սարքեր, սարքավորումներ և գործիքներ, այդ թվում՝ ներակնային ոսպնյակների իմպլանտացիայի և տեղ հասցնման համակարգեր. բժշկական լազերներ. ակնավիրաբուժական համակարգեր, որոնք ներառում են լազերային էներգիան աչքերին հաղորդող լազերային գեներատորներ, աղբյուրներ և օպտիկական սարքեր. ակնաբուժական ախտորոշիչ սարքավորումներ. խոտորաչափներ ակնավիրաբուժության մեջ օգտագործման համար. բժշկական սարքեր և վիրաբուժական համակարգեր. սենսորային սարքեր լուսաբեկումային ախտորոշման և տեղագրային չափման համար, որոնք կարող են օգտագործվել լազերային ճառագայթների միջոցով հեռացման վիրահատությունների մեջ. վիրաբուժական, բժշկական, ատամնաբուժական և անասնաբուժական սարքեր, սարքավորումներ և գործիքներ. ակնաբուժական և (կամ) ակնաչափական սարքեր ախտորոշման և (կամ) բուժման համար. սարքեր տեսողության շտկման և (կամ) բարելավման համար. ներակնային սարքեր տեսողության շտկման և (կամ) բարելավման համար. բժշկական սարքեր, այդ թվում՝ հիպոլորոնային թթվի պարունակությամբ ներարկիչներ աչքերի վիրահատության ժամանակ օգտագործման համար. ստենտներ. փողածողեր (կաթետերներ). փողածողերի (կաթետերների) մետաղալարային ուղղատուներ. կենսաներծվող ստենտներ. դեղորայքային ծածկույթով ստենտներ. լաստակներ փողածողերի (կաթետերների) և ստենտների համար. արյան վերլուծության գործիքներ և բժշկական ախտորոշման համակարգեր. ազդանյութերի պարունակությամբ քարթրիչներ արյան շարժական վերլուծիչների մեջ օգտագործման համար. բժշկական սարքեր, սարքավորումներ և գործիքներ ախտորոշիչ նպատակների համար.

սեկվենսորներ. սպեկտրաչափներ. սենսորներ. կենսասենսորներ. ջերմացիկլերներ. անալիտարարներ, որոնք նախատեսված են բժշկական ախտորոշման համար (սարք). նմուշների պատրաստման գործիքներ. թեստ-լրակազմեր և նմուշների ընտրման հավաքածուներ՝ բաղկացած նմուշների ընտրման սարքերից և լաբորատոր սարքավորումներից. լաբորատոր կոնտեյներներ. կենսա-նոյնականացման սարքեր, որոնց միջոցով հնարավոր է կատարել նոյնականացում, գենատիպացում և ցուցանիշների որոշում՝ նուկլեինաթթուների հաջորդականության, նուկլեինաթթուների, գենետիկական նյութերի, վարակահարուցիչների և (կամ) ախտածին մանրէների վերլուծության համար. փորձանոթներ կենտրոնախուսման միջոցով ԴՆԹ-ի ստացման համար. փորձանոթներ կենտրոնախուսման միջոցով ՌՆԹ-ի ստացման համար. ԴՆԹ-ի պատրաստման փորձանոթներ. ՌՆԹ-ի պատրաստման փորձանոթներ. փորձանոթներ լվացահանման միջոցով ԴՆԹ-ի ստացման համար. փորձանոթներ լվացահանման միջոցով ՌՆԹ-ի ստացման համար. փորձանոթներ և սրվակներ ֆերմենտների (մակարդների) խառնման համար. գործիքներ նմուշների պատրաստման, աղազերծման և ջերմացիկլացման համար. դեղերով լցված հեղուկացիրներ՝ բաղկացած բուկկալային հեղուկացիրի բաղադրությամբ մելքսիկամից՝ անասնաբուժության մեջ չափաբաժնով օգտագործման համար. բժշկական ախտորոշման սարքեր և համակարգեր, որոնք ներառում են դյուրակիր չափիչներ, հերձադանակներ, ցուցիչային շերտեր և ստուգիչ լուծույթներ անասնաբուժության մեջ օգտագործման համար. մասեր, կցամասեր և լրակազմեր բոլոր վերոհիշյալ ապրանքների համար. բոլոր ապրանքները ընդգրկված 10-րդ դասում.

դաս 29. կաթ և կաթի հիմքով արտադրանք. չոր կաթնային խառնուրդներ. կաթի ածանցուկներ (դերիվատներ). կաթի ածանցուկներ (դերիվատներ) պարունակող արտադրանք. սոյայի սպիտակուցի կամ կաթնային շիճուկի հիմքով օգտագործմանը պատրաստ բրիկետներ (ոչ բժշկական նպատակների համար). սպիտակուցի բարձր պարունակությամբ օգտագործմանը պատրաստ սննդային կաթնային ըմպելիքներ (ոչ բժշկական նպատակների համար).

դաս 32. փոշիներ կաթնային շիճուկների հիմքով սպիտակուցային սննդային ըմպելիքների պատրաստման համար. սոյայի հիմքով փոշիներ սպիտակուցային սննդային ըմպելիքների պատրաստման համար, բացառությամբ կաթի փոխարինիչների.

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում. ուսուցողական նյութերի տարածմամբ վարպետաց դասընթացների և սեմինարների կազմակերպում և անցկացում, այդ թվում՝ սննդի և սննդային նյութերի բնագավառում, ինչպես նաև ակնաբուժական վիրահատական համակարգերի և դրանց հետ օգտագործվող սարքավորումների օգտագործման, գործարկման և պրակտիկական զարգացման բնագավառում. հարցազրույցների, կոնֆերանսների, կոնգրեսների և սիմպոզիումների կազմակերպում և անցկացում. սպորտային և մշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում.

դաս 44. բժշկական ծառայություններ, այդ թվում՝ մարդու օրգանիզմի վիճակի ախտորոշման բնագավառում. բժշկական ախտորոշման բնագավառում տեղեկատվության տրամադրում. աչքերի հիվանդությունների բուժում և խնամք. ակնաբուժական վիրահատություններ. լեզիք (աչքի լազերային վիրահատություն) և այլ վիրահատական պրոցեդուրաներ տեսողության բուժման և շտկման համար. բժշկության ոլորտի մասնագետներին և հիվանդներին ակնաբուժության մեջ օգտագործվող բժշկական սարքավորումների մասին տեղեկատվություն պարունակող վեբ-կայքերի տրամադրում. ախտորոշում և բուժում.

դաս 45. սոցիալական ծառայություններ, մասնավորապես՝ նորարարական որոշումներին, գիտությանը, մատչելի բժշկական սպասարկմանը, համայնքի ներգրավվածությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, բարեկեցությանը և առողջությանը սատարող գլոբալ քաղաքացիական պատասխանատվության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի զարգացման աջակցություն:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20150090 (111) 23509
(220) 29.01.2015 (151) 01.10.2015
(181) 29.01.2025

(730) Բրիթիշ Ամերիքն Թբեքոու (Բրենդս) Ինք. (Դելավերի նահանգի կորպորացիա), US
(442) 18.02.2015
(310) UK0003066168 (320) 29.07.2014 (330) GB
(540)



(526) «CARBON» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:
(511)

դաս 34. սիգարետներ. ծխախոտ. ծխախոտային արտադրանք. կրակայրիչներ. լուցկի. ծխելու պիտույքներ:
(740) Զարուհի Մանուկյան

(210) 20150289 (111) 23510
(220) 09.03.2015 (151) 01.10.2015
(181) 09.03.2025

(730) «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ, ք. Իջևան, Երևանյան 9, AM
(442) 20.04.2015
(540)



(511)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր.

դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

(210) 20150301 (111) 23511
 (220) 10.03.2015 (151) 01.10.2015
 (181) 10.03.2025

(730) Ֆիլիփ Մորիս Բրենդս Սաու, CH
 (442) 03.04.2015
 (540)



(526) «less smell» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց և մուգ կապույտ, երկնագույն, մոխրագույն, սպիտակ գունային համակցությամբ:

(511) դաս 34. մշակված կամ չմշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. սիգարներ, սիգարետներ, սիգարիլներ, ծխախոտ սեփական սիգարետները փաթաթելու համար, ծխախոտ ծխամորճով ծխելու համար, ծամելու ծխախոտ, հոտ քաշելու ծխախոտ, կրետեկ. սնուս. ծխախոտի փոխարինիչներ (ոչ բժշկական նպատակներով օգտագործելու համար). էլեկտրոնային սիգարետներ. տաքացվող ծխախոտային արտադրանք. սիգարետները կամ ծխախոտը տաքացնող էլեկտրոնային սարքեր և դրանց մասեր՝ տաքացման ընթացքում առաջացող աերոզոլի մեջ պարունակվող նիկոտինը վերացնելու համար. ծխելու պիտույքներ, սիգարետի թուղթ, ծխափողեր, սիգարետի գոհիչներ, մետաղական տուփեր ծխախոտի համար, սիգարետի տուփեր, մոխրամաններ, ծխամորճեր, գրպանի հարմարանքներ սիգարետները փաթաթելու համար, վառիչներ, լուցկի:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20150319 (111) 23512
 (220) 12.03.2015 (151) 01.10.2015
 (181) 12.03.2025

(730) «Էլֆ գարդեն» ՍՊԸ, Երևան, Եզնիկ Կողբացու 1, շինություն 121, AM
 (442) 03.04.2015
 (540)

Էլֆերի այգի

(511) դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում.
 դաս 43. մսուր-մանկապարտեզ:

(210) 20150320 (111) 23513
 (220) 12.03.2015 (151) 01.10.2015
 (181) 12.03.2025

(730) «Էլֆ գարդեն» ՍՊԸ, Երևան, Եզնիկ Կողբացու 1, շինություն 121, AM
 (442) 03.04.2015
 (540)

Էլֆ Գարդեն

(511) դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում.
 դաս 43. մսուր-մանկապարտեզ:

(210) 20150322 (111) 23514
 (220) 12.03.2015 (151) 01.10.2015
 (181) 12.03.2025

(730) Աթելլաս Ֆարմա Ինք., JP
 (442) 03.04.2015
 (540)

ЦЕФАМЕЗИН

(511) դաս 5. հակաբիոտիկներ:
 (740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20150328 (111) 23515
 (220) 12.03.2015 (151) 01.10.2015
